ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅՈՒՆ

ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՀԱՐԱՑՈՒՅՑԸ ԵՎ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՍՈՑԻԱԼ-ՓԻԼԻՍՈՓԱՅԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐԸ

ՄԱՐԻՆԵ ՇԱՀԲԱՋՅԱՆ

Առաջատար պոստինդուստրիալիստների աշխատությունների սոցիալ-փիլիսոփայական վերլուծությունից արվում է այն կարևոր հետևությունը, որ տեղեկատվական հասարակությունը, ինչպես Դ.Բելն է բնութագրում, «գիտելիքների հասարակություն» է: Ապագա հասարակության գլխավոր ռեսուրսները գիտական գիտելիքները և տեղեկատվությունն են: «Տեղեկատվական հասարակություն» հասկացությունն առավել համարժեքորեն է արտահայտում ապագա հասարակության էությունը, որը կազմավորվում է համակողմանի և լիակատար տեղեկատվայնացման պայմաններում:

Սոցիալ-փիլիսոփայական իմաստով դինամիկորեն զարգացող հասարակության տեղեկատվայնացումը տեխնոլոգիական, քաղաքական և սոցիոմշակութային գործունեության առանձնահատուկ տեսակ է, որը նպատակաուղղված է տեղեկատվական հասարակության, տեղեկատվական քաղաքակրթության կազմավորմանը:

Բանալի բառեր **–** տեղեկատվական հասարակություն, տեղեկատվայնացում, համակարգչային տեխնոլոգիաներ, տեղեկատվական տեխնոլոգիաներ, տեղեկատվություն, տեղեկատվական ռեսուրս:

Տեղեկատվական հասարակության կազմավորման հիմնախնդիրն ամենաքննարկվող թեմաներից է ժամանակակից սոցիալական փիլիսոփայության, սոցիոլոգիայի և քաղաքագիտության մեջ:

Որպես նոր տեսական հարացույց՝ տեղեկատվական հասարակության հայեցակարգը, նախ՝ համադրում է ինչպես ընդհանրացնող սոցիալ-փիլիսոփայական տեսությունների, այնպես էլ կիրառական սոցիոլոգիայի տարրերը: Երկրորդ՝ առաջադրում և հիմնավորում է պատմական պարբերացման նոր տրամաբանություն, ըստ որի՝ համաշխարհային-պատմական գործընթացն անցնում է իր զարգացման երեք բնականոն փուլերով՝ «ագրարային-արդյունաբերական-հետարդյունաբերական հասարակություն», որը տեղեկատվական հասարակության հայեցակարգի ձևավորման փիլիսոփայական-մեթոդաբանական նախադրյալն է:

Տեղեկատվական հասարակության՝ որպես հետարդյունաբերական հասարակության առավել հետաքրքիր և հիմնավորված սոցիալ-փիլիսոփայական հայեցակարգերից մեկը մշակել է հայտնի ամերիկացի սոցիոլոգ և փիլիսոփա

Դանիել Բելը: Այդ հայեցակարգը շարադրված է նրա «Հետարդյունաբերական հասարակության հաստատումը. սոցիալական կանխատեսման փորձ» գրքում (1973թ.)[1]: «Մոտեցող հարյուրամյակում, – նշել է Դ.Բելը, – տնտեսական ու սոցիալական կյանքի, գիտելիքի, արտադրության միջոցների, ինչպես նաև մարդու աշխատանքային գործունեության բնույթի համար վճռորոշ նշանակություն է ստանում սոցիալական նոր կենսաձևի հաստատումը, որը հիմնվում է հեռահաղորդակցության վրա: Տեղեկատվության ու գիտելիքների կազմակերպման ու մշակման մեջ հեղափոխությունը, որում կենտրոնական տեղը զբաղեցնում է համակարգիչը, ծավալվում է հետարդյունաբերական հասարակության հաստատման հետ միաժամանակ: Հետարդյունաբերական հասարակության երեք տեսանկյուններ կարևոր են հեռահաղորդակցական հեղափոխության ըմբռնման համար.

– անցումը արդյունաբերականից սպասարկումնային /սերվիսային/ հասարակության,

– տեխնոլոգիական նորարարությունների իրականացման համար կոդիֆիկացված տեսական գիտելիքների վճռորոշ նշանակությունը,

– նոր «մտավոր տեխնոլոգիայի» վերածումը համակարգային վերլուծության ու որոշումների ընդունման տեսության առանցքային գործիքի»[2]:

Տեղին է նշել, որ Դ.Բելը հետարդյունաբերական հասկացությունը մեկնաբանում է երկակի իմաստով, նախ՝ որպես ինչ-որ մի օբյեկտիվ իրականություն, որը մարմնավորում է ներկայումս ծավալվող հեղափոխական վերափոխումների արդյունքները, երկրորդ՝ որպես որոշակի տրամաբանական կառույց, որն օգնում է իմաստավորել դինամիկորեն զարգացող սոցիալական իրականությունը: Այս տեսանկյունից հետարդյունաբերական հասկացությունը Բելը բնութագրում է որպես «տեղեկատվության և գիտելիքի տիրապետության հասարակություն»:

Հետարդյունաբերական հասարակության տեսաբանների շարքում առանձնանում է նաև ամերիկացի հայտնի սոցիոլոգ և ֆուտուրոլոգ Էլվին Թոֆլերը, ում կարծիքով մարդկության զարգացումն ունի ալիքաձև բնույթ: Առաջին ալիքն ագրարային (գյուղատնտեսական) հեղափոխությունն է, որը տևել է մի ամբողջ հազարամյակ: Երկրորդ ալիքը արդյունաբերական հեղա-

---

[1] **Белл Д.** Грядущее постиндустриальное общество. Опыт социального прогнозирования. Москва, 1999.

[2] **Թոֆլեր Է.,** Գիտելիքն ու իշխանությունը տեղեկատվական հասարակության մեջ: Երևան, 2006, էջ 26, 27:

փոխությունն է, որը տևել է առնվազն երեք հարյուր տարի: Երրորդ ալիքը հետարդյունաբերական հեղափոխությունն է, որը ծավալվում է ներկայումս: Թոֆլերի կարծիքով երրորդ ալիքը ներթափանցում է ամենուր՝ իր հետ բերելով նոր ընտանեկան հարաբերություններ, նոր աշխատաոճ, նոր բարոյագիտություն, նոր տնտեսություն, նոր քաղաքական կոնֆլիկտներ, ինչպես նաև որակական փոփոխություններ հասարակական գիտակցության մեջ:

Ինչի՞ է հանգում տեղեկատվական հասարակության թոֆլերյան վերլուծությունը: Նախ՝ ուշադրությունը կենտրոնացնում է գիտելիքի ու տեղեկատվության ձեռքբերման, մշակման, պահպանման, փոխանցման, տարածման և օգտագործման հրատապ հիմնախնդիրների վրա: Թոֆլերը տեղեկատվությունը, տեղեկատվական ռեսուրսը համարում է կապիտալ, որը կարելի է կուտակել և պահպանել՝ ապագայում օգտագործելու միտումով: Տեղեկատվական ռեսուրսների զարգացման շնորհիվ կարելի է ստեղծել և բազմապատկել հարստությունը[3]:

Երկրորդ՝ առաջադրում և հիմնավորում է այն կարևոր դրույթը, որ տեղեկատվական ռեսուրսները դինամիկորեն զարգացող ժամանակակից հասարակության տնտեսական և սոցիոմշակութային հիմնարար արժեքներ են: Հասարակության տեղեկատվական ներուժից է կախված բոլոր ուղղություններով նրա առաջընթաց զարգացումը: Երրորդ՝ հասարակության տեղեկատվայնացման բնույթը և տեմպերը կախված են, նախևառաջ, գիտելիքը սոցիալական կապիտալի, առաջնային արժեքի վերածվելու ընթացքից: Չորրորդ՝ տեղեկատվական հասարակության հետագա զարգացումը մեծապես կախված է համաշխարհայնացման գործընթացների բնույթից և ուղղվածությունից: Այդ պայմաններում վճռորոշ նշանակություն են ձեռք բերում ազգային տեղեկատվական ենթակառուցվածքի զարգացումն ու դրա ներգրավվածությունը համաշխարհային տեղեկատվական համակարգի մեջ:

Քննադատական սոցիոլոգիայի ուղղության ներկայացուցիչ, հետմոդեռնիզմի, ստրուկտուրալիզմի և հետստրուկտուրալիզմի ֆրանսիական ինտելեկտուալ ավանդույթների հետևորդ, ամերիկացի հետազոտող Մ.Պոստերը Դ.Բելի հայեցակարգի հիմնական թերությունը տեսնում է նրանում, որ, չնայած հետարդյունաբերական հասարակության ոլորտը միայն սոցիալ-տնտեսական կառուցվածքի մակարդակով սահմանափակելու ակնհայտ հակվածությանը, Բելը, այնուամենայնիվ. «Իր ամբողջ աշխատության մեջ փորձում է հետար-

[3] **Тоффлер Э.** Третья волна. // США-экономика, политика, идеология. 1982, №7, стр. 11.

դյունաբերական հասարակության սահմանման նույն հարթության մեջ տեղավորել տնտեսական, քաղաքական և մշակութային գործոնները», ինչի հետևանքով «նոր երևույթների սահմանումները բնորոշ են դառնում ամբողջ հասարակությանը»: Նրա պնդումը, թե «հետարդյունաբերական հասարակությունում գիտելիքը անկախ փոփոխական է, որի միջոցով որոշվում են նաև այլ փոփոխականներ, ինչպիսիք են՝ աշխատանքը և կապիտալը», Պոստերի կարծիքով կարող էր վարկած դառնալ ապագա հետազոտությունների համար: Սակայն, շարունակում է Պոստերը. «Բելն իր համոզմունքը լսարանին ներկայացնում է որպես եզրահանգում՝ «հիանալի ճարտասանության միջոցով կանխադրույթը ձևափոխելով եզրակացության» և «տեսական դրույթին հաղորդելով հիմնավորված փաստի տեսք»[4]:

Տեղեկատվական հասարակության կառուցվածքի բովանդակային տեսական վերլուծությունն իրականացնելու ձգտումը բնորոշ է նաև Տ.Սթոուների, Ա.Տուրենի, Տ.Դայզարդի, Մ.Կաստելսի աշխատություններին: Տ.Սթոուներն իր «Տեղեկատվական հարստություն՝ հետարդյունաբերական տնտեսության պրոֆիլը» գրքում ընդգծում է գիտական գիտելիքի վիթխարի դերը՝ նոր, առաջադիմական տեխնոլոգիաների ստեղծման և զարգացման գործում: Մարդկային կապիտալը նա համարում է հետարդյունաբերական հասարակության կարևորագույն ռեսուրսը: Նա պնդում է, որ մարդկային կապիտալի զարգացման սկզբունքային նպատակն ու նշանակությունը պետք է բխի հասարակության և տնտեսության նոր կողմնորոշումից կամ ավելի ճիշտ ասած, առանձին անձի ինքնիրացման նպատակից: Ի դեպ, «սոցիալական կապիտալ» եզրույթը ներմուծել են Ռ.Պատնեմը և Դ.Կոուլմենը[5]:

Ֆրանսիացի հետազոտող Ա.Տուրենն իր «Փոխանակումից դեպի հաղորդակցություն՝ ծրագրավորված հասարակության ծնունդը» աշխատանքում նշում է, որ արդեն իսկ «արդյունաբերական հասարակության» մոդելի սպառվածությունը նշանավորում է դժվարին, սակայն անխուսափելի անցումը հասարակության նոր տիպին: Այն ոչ միայն ավելի ակտիվ և շարժունակ է, այլև ավելի վոլյունտարիստական և վտանգավոր[6]: Նոր հասարակությունն Ա.Տուրե-

---

[4] **Poster M**. The mode of information. Poststructuralism and social context. Cambridge, 1990, p. 43.

[5] **Патнем Р.** Чтобы демократия сработала. Гражданские традиции в современной Италии. Москва, 1996.

[6] Новая технократическая волна на Западе (составление и вступительная статья П.С. Гуревича). Москва, 1986, стр. 411.

նը առաջարկում է անվանել «ծրագրավորվող հասարակություն», որն ունակ է ստեղծելու արտադրության, բաշխման և սպառման կառավարման սկզբունքորեն նոր մոդելներ:

Ամերիկացի հայտնի հետազոտող Տ.Դայզարդն իր «Տեղեկատվության դարաշրջանի գալուստը» գրքում նշել է, որ արդի տեխնոլոգիաներն առաջարկում են անհամեմատ ավելի նշանակալի տեղեկատվական և հաղորդակցական ռեսուրսներ, ինչն ինքնին վկայում է, որ մենք մտնում ենք մի նոր դարաշրջան: Նա իրավացիորեն նշում է, որ տեղեկատվական հասարակության ձևավորմամբ ինքնաբերաբար չեն լուծվում սոցիալ-տնտեսական հիմնախնդիրները[7]:

Ժամանակակից տեղեկատվական հասարակության միտումների համակարգային վերլուծություն է ներկայացնում հայտնի տեսաբան Մանուել Կաստելսը: Իր «Տեղեկատվական դարաշրջան» եռահատոր աշխատության մեջ նա հանգամանորեն վերլուծել է քաղաքակրթական հիմնարար գործընթացները, որոնք հարուցվել են տեղեկատվական տեխնոլոգիաների սկզբունքորեն նոր դերակատարությամբ: Տեղեկատվական տեխնոլոգիաների մեջ տեղի ունեցող հեղափոխությունը նրա կարծիքով նոր տնտեսության, հասարակության և մշակույթի կայացման հետ կապված բազմաբնույթ բարդությունների վերլուծության սոցիալ-փիլիսոփայական մեկնակետն է[8]: Չերկնչելով տեխնոլոգիական դետերմինիզմի մեջ մեղադրվելու վտանգից՝ Մ.Կաստելսը հատուկ ընդգծել է, որ հասարակությունը չի կարող հասկացվել կամ նկարագրվել առանց իր տեխնոլոգիական բազիսի: Միևնույն ժամանակ Կաստելսը շեշտում է նաև այն միտքը, որ տեխնոլոգիան ամբողջությամբ չի որոշում ժամանակակից հասարակության պատմական էվոլյուցիան, և որ սոցիալական փոփոխությունները, տեխնոլոգիան հասարակության զարգացման ռեսուրսային ներուժն է, որն ակտիվորեն ներազդում է սոցիալական փոփոխությունների ծավալման ուղղությունների վրա: Հասարակությունն իր շարժընթացի ռազմավարական ուղու ընտրության հարցում, այնուամենայնիվ, նշանակալի չափով ազատ է: Մ.Կաստելսի տեսակետն այս հարցում համընկնում է Դ.Բելի կարծիքի հետ:

Սակայն, կայացող նոր հասարակության մեջ Մ.Կաստելսի կարծիքով

---

[7] Նույն տեղում, էջ 352:

[8] **Кастельс М.** Информационная эпоха: экономика, общество и культура. Москва, 2000, стр. 28.

արտադրության արմատական փոխակերպման գործոնը, որը նրա ըմբռնմամբ հիմնականում համակարգչային տեխնոլոգիաների զարգացումն է, վճռորոշ ազդեցություն է ունենում իշխանության, առհասարակ սոցիոմշակութային ոլորտի վրա: Տեղեկատվական տեխնոլոգիաները որակապես մի նոր մակարդակի են բարձրացնում գիտելիքների և տեղեկատվական գործընթացների նշանակությունը: Սակայն այդ մասին նշել են նաև Դ.Բելը, Ա.Տուրենը, Է.Թոֆլերը և պոստինդուստրիալիզմի մյուս նշանավոր տեսաբանները: Մ.Կաստելսը յուրովի է բնութագրում տեղեկատվական հասարակության տեսությունը՝ որպես «ինֆորմացիոնալ հասարակության» (informational society) հայեցակարգ՝ ի տարբերություն հիշատակված հեղինակների՝ «տեղեկատվական հասարակության» (information society) հայեցակարգի: Մ.Կաստելսի կարծիքով տեղեկատվությունը և փոխանակումն ուղեկցել են քաղաքակրթության զարգացմանն իր բոլոր փուլերում: Միևնույն ժամանակ այսօր ծնունդ առնող «տեղեկատվական հասարակությունը կառուցվում է այնպես, որ տեղեկատվության ձևավորումը, վերամշակումը և փոխանցումը դառնում են արտադրողականության աճի և իշխանության փոխակերպման հիմնարար աղբյուրները»[9]:

Մենք տեղեկատվական դարաշրջանի անցման փուլում ենք, որի գլխավոր առանձնահատկությունը տեղեկատվական ցանցերն են, որոնք միմյանց են կապում մարդկանց, ինստիտուտներն ու պետությունները: Ի տարբերություն բազմաթիվ հեղինակների, Կաստելսը չի գտնում, որ ցանցերը նշանավորում են ազգային պետությունների մահը: Հենվելով իր նախորդների աշխատանքների վրա՝ Մ.Կաստելսը ուրվագծում է տեղեկատվական-տեխնոլոգիական հարացույցի սահմաններն իրենց բնութագծերով: Առաջին՝ նրա կողմից առաջադրված հայեցակարգի շրջանակներում տեղեկատվությունը տեխնոլոգիաների սկզբնական հումքն է, և, հետևաբար, առաջին հերթին տեխնոլոգիան է ներգործում տեղեկատվության վրա: Երկրորդ՝ նոր տեխնոլոգիաները ներառում են մարդկային գործունեության բոլոր տեսակները: Երրորդ՝ տեղեկատվական նոր տեխնոլոգիաները բնութագրում են սոցիալական համակարգի փոփոխությունների դինամիկայի ցանցային տրամաբանությունը: Չորրորդ՝ տեղեկատվական-տեխնոլոգիական հարացույցը հիմնված է ճկունության սկզբունքի վրա, երբ վերակառուցվելու և զարգանալու տեխնոլոգիական ունակությունը, ներուժը ձեռք են բերում վճռական նշանակություն: Հինգերորդ՝ տեղեկատվական-տեխնոլոգիական հարացույցի կարևոր բնութագրերից մեկը

[9] Նույն տեղում, էջ 42:

դառնում է առաջատար տեխնոլոգիաների զուգամերձեցումը (կոնվերգենցիան): Օրինակ՝ միկրոէլեկտրոնիկան, հեռահաղորդակցությունը, օպտիկական էլեկտրոնիկան և համակարգիչներն ինտեգրվում են միասնական տեղեկատվական համակարգի մեջ: Միասին վերցրած տեղեկատվական-տեխնոլոգիական հարացույցի հենց այս բնութագրերն են կազմում տեղեկատվական հասարակության հիմքը:

Մ.Կաստելսի կարծիքով կյանքի է կոչվում նոր մշակույթ՝ երևութական (վիրտուալ) իրականության մշակույթը: Երևութական իշխանությունը, ըստ Մ.Կաստելսի, համակարգ է, որտեղ ինքը՝ իրականությունը (այսինքն՝ մարդկանց նյութական-խորհրդանշական գոյությունը), լիովին ներառված և ընկղմված է երևութական կերպարների, երևութական աշխարհի մեջ, որտեղ արտաքին արտացոլումները ոչ թե պարզապես գտնվում են էկրանի վրա, այլ իրենք վերածվում են մարդկային փորձի և փորձառության դաշտի: Հեռուստատեսության հետ մեկտեղ համակարգչային ցանցերը (miniter Internet) դառնում են երևութական իրականության մշակույթի կարևորագույն ձևակազմավորիչ գործոնը:

Միանգամայն ակներև է, որ սկզբունքորեն նոր իրադրությունը պահանջում է մշակել տեղեկատվական զարգացման միտումների ուսումնասիրության ավելի լայն կոնցեպտուալ ցանց, երբ *տեղեկատվական հասարակություն* հասկացությունը տարբերակվում է մի շարք լրացուցիչ մտապատկերներով: Դրանց թվում առանձնանում են *տեղեկատվայնացում, տեղեկատվական ռեսուրսներ* և այլ հասկացություններ: Անցնելով տեղեկատվական զարգացման կոնցեպտուալացման խնդրին՝ հարկ է շարադրել որոշ մեթոդաբանական նկատառումներ, նախ՝ այդ խնդիրը պահանջում է նշել և պարզել տեղեկատվության և տեղեկատվայնացման դաշտում առկա հիմնահարցերի կոորդինատները, այսինքն՝ պարզել տեղեկատվական զարգացման նոր ձևերը, դրանց վերաբերյալ առավել ընդհանուր պատկերացումները և դրանց ուսումնասիրության տեսականորեն հնարավոր ուղիները: Երկրորդ՝ տեղեկատվական բարդ զարգացումների սոցիալ-փիլիսոփայական ուսումնասիրության առարկան ամենևին էլ ինչ-որ պարզ «տվյալներ» չեն, իրականում այդ «տվյալները» հասկացական իմաստավորման արդյունք են, որովհետև առանց տեսական հասկացությունների հստակեցման հազիվ թե հաջողվի գլուխ հանել տեղեկատվական բարդ և հակասական զարգացումներից: Երրորդ՝ փոփոխվող տեղեկատվական իրականությունը պետք է իմաստավորել այնպիսի եզրույթներով և հասկացություններով, որոնք հստակեցնում են մեր պատկերացումները տեղեկա-

տվական փոխակերպումների էության, վտանգների և սպառնալիքների բնույթի և հեռանկարների մասին:

Հայտնի ռուս փիլիսոփա Ա.Ուրսուլի բնորոշմամբ տեղեկատվայնացումը հասարակության կողմից տեղեկատվության՝ որպես զարգացման ռեսուրսի առավել լիարժեք տիրապետման բարդ և հակասական գործընթաց է, որը նպատակաուղղված է մարդկային քաղաքակրթության մտավոր ներուժի դերի բարձրացմանը, տեղեկատվական հասարակության կայացմանը և նոոսֆերայի հաջորդական աստիճանների կազմավորմանը[10]: Տեղեկատվայնացումը՝ որպես սոցիոմշակութային և տեխնոլոգիական փոխակերպման համալիր գործընթաց, համակողմանիորեն նպաստում է մարդու, իսկ նրա հետ միասին նաև հասարակության սոցիալ-տնտեսական, գիտատեխնոլոգիական և հոգևոր զարգացմանը:

Ասվածից հետո կարևոր է կանգ առնել այդ տեղեկատվայնացումն ազդակող անհատական և հասարակական պահանջմունքների և դրանց փոխկապակցված գործոնների համակարգային վերլուծության վրա:

1. <u>Մարդու և հասարակության տեղեկատվական պահանջմունքների աճը:</u> Տեղեկատվայնացման գործընթացում անհրաժեշտ է նպատակաուղղված ձևավորել և զարգացնել փոխակերպվող հասարակության տեղեկատվական պահանջմունքներ, ինչը ենթադրում է այնպիսի պայմանների ստեղծում, որոնք ազդարարում են մարդկանց տեղեկացվածության և տեղեկատվական մշակույթի մակարդակի բարձրացման մասին:

2. <u>Տեղեկատվության վերածումը ռեսուրսի որոշում է մարդկային քաղաքակրթության զարգացումը</u>: Այսօր տեղեկատվությունը և գիտելիքները դառնում են մարդկային հասարակության զարգացման առաջնահերթ ռեսուրսը: Տեղեկատվայնացումը հնարավորություն է ստեղծում մարդու գործունեության բոլոր ոլորտներում տեղեկատվական տեխնոլոգիաների զանգվածային օգտագործման, ավտոմատացված տեղեկատվական համակարգերի մշակման և կիրարկման համար, որոնք մեծապես ազդում են տնտեսական, կազմակերպական և սոցիոմշակութային կառուցվածքների արդյունավետ գործունեության վրա:

3. <u>Տեղեկատվայնացման համակարգայնությունը</u>: Տեղեկատվայնացումը հենվում է համեմատականորեն ավանդական միջոցների և արդի տեղեկա-

---

[10] Տե՛ս **Урсул А.Д.** Переход России к устойчивому развитию. Ноосферная стратегия. Москва, 1998, стр. 341:

տվական տեխնոլոգիաների լայն օգտագործման վրա, որոնք ներառում են ոչ միայն համակարգիչները, այլև հեռահաղորդակցական, օպտիկա-էլեկտրոնային և ցանցային կառուցվածքները: Այս ամենի արդեն իսկ պարզ թվարկումը վկայում է տեղեկատվայնացման գործընթացի համակարգային բնույթի մասին[11]:

4. Հասարակության ինտելեկտուալացումը և երևութականացումը (վիրտուալացումը): Տեղեկատվության՝ որպես հասարակության հիմնային ռեսուրսի, օգտագործումը պահանջում է, նախևառաջ, բարձրացնել առանձին մարդու մտավոր հասունության և իրազեկվածության մակարդակը: Տեղեկատվությունը ռեսուրս է միայն այն մարդու համար, ով հասել է մտավոր զարգացման որոշակի մակարդակի, երբ կարող է տեղեկատվությունն օգտագործել հենց որպես ռեսուրս, հակառակ դեպքում տեղեկատվությունը կարող է պարզապես վերածվել տեղեկատվական աղմուկի, որը միայն ավելացնում է տվյալ համակարգի, այսինքն՝ հասարակության էնտրոպիայի, կամ որ նույնն է՝ իրավիճակի անորոշության չափը:

5. Ինֆոսֆերայի կազմավորումը: Տեխնոլորտի հետ միասին ստեղծվում է ինֆոսֆերան՝ որպես համաշխարհային ենթակառուցվածք, որը միավորում է մտավոր համակարգչային համակարգերը և համաշխարհային հեռահաղորդակցական ցանցերը: Այսօր ինֆոսֆերայի միջոցով ձևավորվում է համաշխարհային ինչ-որ նոր համակարգ, որի ստեղծողներն ու դրանից օգտվողներն ունեն սոցիոմշակութային մտածողության ուրույն եղանակ, նոր էթիկա և փոխըմբռնման նոր մշակույթ. համակարգիչը, տեղեկատվական տեխնոլոգիաները նպաստում են մարդկային գիտակցության նոր չափումների և հորիզոնների բացահայտմանը:

6. Տեղեկատվական անվտանգության ապահովումը: Տեղեկատվայնացման գործընթացի արդյունքում ձևավորվում է ազգային անվտանգության նոր բաղկացուցիչը՝ տեղեկատվական անվտանգությունը: Ինֆոսֆերայի աճող նշանակության պայմաններում այսօր տեղեկատվական անվտանգության ապահովումը դարձել է արտակարգ հրատապ և սուր համազգային հիմնախնդիր: Ըստ ՀՀ տեղեկատվական անվտանգության հայեցակարգի՝ դիտարկվող հասկացությունը բնութագրում է տեղեկատվության ոլորտում ազգային շահերի պաշտպանվածության ընդհանուր վիճակը, ինչը պայմանա-

[11] **Ващекин Н.П., Пасхин Е.Н., Урсул А.Д**. Информатизация общества и устойчивое развитие. Москва, 2000, стр. 75-76.

վորված է անձի, հասարակության և պետության հավասարակշռված շահերի ամբողջությամբ[12]:

7. Գիտելիքների Համաշխարհային բանկի և մարդկության ինտեգրալ ինտելեկտի ձևավորումը: Տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացումը հանգեցնում է համաշխարհային տեղեկատվական ցանցերի ձևավորմանը: Համաշխարհային համակարգչային ցանցերի հիման վրա կազմավորվում է գիտելիքների համընդհանուր բանկ, որի մեջ ամփոփված գիտատեխնիկական տեղեկատվությունն արտացոլում է բնության և հասարակության զարգացման օրենքները: Դա այն տեղեկատվությունն է, որը համապարփակ մասշտաբներով նկարագրում է աշխարհի, նրանում ապրող ազգերի անցյալի, ներկայի և ապագայի գիտական ընդհանուր պատկերը:

МОДЕЛЬ ИНФОРМАЦИОННОГО ОБЩЕСТВА И ОБЩИЙ СОЦИАЛЬНО-ФИЛОСОФСКИЙ ОБЛИК

МАРИНЕ ШАХБАЗЯН

Из анализа ведущих постиндустриальных работ мы приходим к выводу, что информационное общество это “общество знаний” как описывает Д. Белн. Основными ресурсами будущего общества являются научные знания и информация. Концепция “информационного общества” более адекватно отражает сущность будущего общества, которое формируется в контексте всеобъемлющей и полной информатизации.

С социологически-философской точки зрения информатизация динамично развивающегося общества представляет собой особый вид технологической, политической и социокультурной деятельности, направленной на формирование информационного общества, информационной цивилизации.

Ключевые слова – информационное общество, информатизация, IT-технологии, информация, информационный ресурс.

[12] ՀՀ նախագահի կարգադրությունը «Հայաստանի Հանրապետության տեղեկատվական անվտանգության հայեցակարգը հաստատելու մասին», ՀՀ ՊՏ 2009/35, 15.07. 2009:

THE INFORMATION SOCIETY
(ITS PARADIGM AND SOCIO-PHILOSOPHICAL DESCRIPTION)

MARINE SHAHBAZYAN

The conclusion from the socio-philosophical studies of the leading post-industrialist works, as Daniel Bell describes it, is that information society is a "knowledge society". The main resources of the future society are scientific knowledge and information. The concept of "information society" more adequately reflects the essence of the future society, formed under the conditions of comprehensive and complete information.

The informatization of a dynamically developing society from the socio-philosophical prospect is a special type of technological, political and socio-cultural activity aimed at establishing an informational society and an information civilization.

Key words – information society, informatization, computer technologies, IT (information technologies), information, information resource